ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատված է

_____________ ֆակուլտետի խորհրդի

____ նիստում

“_17__”_____12________2020 թ.

________________

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2020

## I. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

**Թվարկել և վերլուծել Ֆակուլտետի գործունեությունը հաշվետու ժամանակահատվածում իր առաքելության և ռազմավարական պլանին համապատասխան:**

Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի փակուլտետի 2020 թվականի գործունեությունն ուղղված է եղել համալսարանի հիմնական առաքելության, այն է՝ կրթության, սոցիալական, հումանիտար ոլորտներում ազգային և միջազգային փորձին համապատասխան բարձրորակ մասնագետների պատրաստումը, բարձրագույն և հետբուհական կրթական ծրագրերի միջոցով գիտելիքի ստեղծումը, հմտությունների ձևավորումը, պահպանումը և հանրային ոլորտում մանկավարժական արժեքների տարածումը: 2020 թվականին աշխատանքերն իրականացվել են համաձայն 2016-2020 զարգացման ռազմավարական ծրագրի 2020 թվականի գործողությունների պլանի: Մասնավորապես, իրականացվել են հետևյալ քայլերը:

Ֆակուլտետի զարգացման ծրագրի ռազմավարական <u>1-ին ուղղության՝ բարձրորակ կրթության նորագույն մոտեցումների</u> հիմնական նպատակների և խնդիրների ուղղությամբ իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

Ֆակուլտետի ամբիոնների ՊԴԱ կազմի լուսավորչական, խորհրդատվական մասնագիտական իրականացրած աշխատանքների արդյունքում շարունակական կրթության շրջանակներում փակուլտետի տարբեր մասնագիտություններում իրենց ուսումն են շարունակում ուսուցման առկա համակարգում՝ 1, հեռակա համակարգում՝ 12 ուսանող:

Ամբիոնների ՊԴԱ կազմը կրթական ծրագրերում կիրառել են դասավանդման, ուսումնառության և արդյունքների գնահատման միասնական չափանիշներ: Կրթական ծրագրերի բովանդակային դասընթացների ուսումնական նյութերը հնարավորինս մշակվել և վերամշակվել են՝ ապահովելու համար դասավանդման, ուսումնառության գործընթացքում սովորողների քննողական մտածողության ու թիմային հետազոտական աշխատանքների կարողությունների զարգացումը: Թազավարակի համավարակի հանգամանքներով պայմանավորված առցանց ուսուցման գործընթացում փոփոխության են ենթարկվել գրավոր և ինքնուրույն աշխատանքների թվաքանակը, ներկայացման առանձնահատկությունները, հատուկ ուշադրություն է դարձվել աշխատանքների ստեղծագործական հետազոտական բաղադրիչներին: Պարբերաբար իրականացվել են որակի ներքին ապահովման մշտադիտարկման աշխատանքներ, որոնց մասին զեկույցներ են ներկայացվել ռեկտորատի նիստերին: Ուսումնական գործունեության ընթացքում դասախոսությունների, գործնական և սեմինար պարապմունքների ընթացքը մշտադիտարկվել է ամբիոնների և փակուլտետի կողմից, իրականացվել են նաև դասալսումներ, ստուգման ձևերը, այդ թվում նաև ամփոփիչ քննությունների ընթացքը տեսաձայնագրվել է: Վերոնշյալ մշտադիտարկման գործընթացները հնարավորություն են տվել ապահովել ուսանողների ուսումնառության արդյունքների օբյեկտիվ գնահատումը, բողոքարկման ընթացակարգը, ապահովել այդ գործընթացների առավել հրապարակայնությունն ու հետևողական կիրառումը, թափանցիկությունը:

Վերանայվել և կատարելագործվել են ԿԾ և ուսումնական գործընթացի արդյունավետությունն ապահովող տեղեկատվական փաթեթները /հիմք՝ ամբիոնների նիստերի արձանագրություններ/:

Ակտիվորեն կիրառվել է ՀՊՄՀ-ում ստեղծված նորարարական կրթական միջավայրը: Ուսանողները և դասախոսները ակտիվորեն համատեղել են նաև կրթական էլեկտրոնային հարթակի կիրառման հնարավորությունները և համացանցի սոցիալական ռեսուրսները, սոցիալական մեդիան վերջիններիս միասնականացման միջոցով: Թե Classroom հարթակում ստեղծված դասընթացների, մանկավարժական, մասնագիտական պրակտիկաների հարթակներում, թե սոցիալական ցանցերում ներկայացվել են իրականացված աշխատանքների ընթացքն ու արդյունքները: Պարբերաբար իրականացնել են առցանց հանդիպումներ դասախոսների և ուսանողների հետ՝ էլեկտրոնային ռեսուրսների կիրառման արդյունավետության բարձրացման նպատակով:
Ռազմավարական ծրագրի <u>2-րդ ուղղության՝ արդիական հետազոտություն եվ նորարարություն,</u> հիմնական նպատակների և խնդիրների ուղղությամբ իրականացվել են հետևյալ աշխատանքները՝
Գիտական թեմաներն ընտրվել են՝ ելնելով պետության, հասարակության և բուհի շահերից՝ հիմք ընդունելով արդիականության և շուկայի պահանջները, հնարավորության սահմաններում պահպանելով հաջորդականության և փոխլրացման սկզբունքները հիմք՝ ամբիոնների և փակուլտետի խորհրդի նիստերում հաստատված գիտական աշխատանքների հաստատված թեմաները/:
փակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմը հրատարակել է թվով 38 գիտական աշխատություններ ՀՀ հեղինակավոր, նաև միջազգային վարկանիշային ամսագրերում /ավելի մանրամասն՝ Տես՝ սույն հաշվետվության VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ բաժնում, ամբիոնների 2020 թվականի տարեկան հաշվետվություններ/:
Ռազմավարական ծրագրի <u>3-րդ ուղղության՝</u> մարդկային ռեսուրսների կառավարում, հիմնական նպատակների և խնդիրների ուղղությամբ իրականացվել են հետևյալ աշխատանքները: Թազավարակի համավարակով պայմանավորված՝ փակուլտետում այս տարի չեն կազմակերպվել վերապատրաստման դասընթացներ, սակայն ամբիոնների ՊԴԱ կազմը սեփական նախաձեռնությամբ

մասնակցել են առցանց վերապատրաստման տարբեր դասընթացների /Տես՝ ամբիոնների 2020 տարեկան հաշվետվություններ/: **Իրականացվել են** դասախոս-ուսանող կապի զարգացմանն ու կատարելագործմանն ուղղված միջոցառումներ /առցանց/՝ որոնք միտված էին պատկանելիության զգացումի ուժեղացմանը, փոխադարձ շահերի գիտակցմանը, լավագույն ավանդույթների պահպանմանը և այլն:

Ռազմավարական ծրագրի <u>**4-րդ ուղղության՝**</u> կողմնորոշված դիմորդներ և ուսումնառողներ, նպատակների և խնդիրների ուղղությամբ իրականացվել են հետևյալ աշխատանքները:

ֆակուլտետի կրթական ծրագրերի և մասնագիտությունների նկատմամբ լրատվամիջոցների ուշադրությունը գրավելու նպատակով ֆակուլտետի ղեկավարության աջակցությամբ ամբիոնների ՊԴ կազմը մասնակցել է մի շարք կրթական կրթական ու մշակութային նախագծերի: Մասնավորապես համալսարանի լրատվության և հանրության հետ կապերի վարչության հետ համագործակցության արդյունքում ամբիոնների ՊԴ կազմը «Հաջողության բանաձեւ» հաղորդաշարի թողարկումներում ներկայացրել հոգեբանություն մասնագիտությունը, ինչպես նաև հոգեբանական մի շարք հիմնահարցեր, որոնք ներկայումս հայտնվել են հասարակության ուշադրության կենտրոնում:

1. Հոգեբանություն /Սուսաննա Փիլոսյան/
2. Արտակարգ իրավիճակների հոգեբանություն /Սամվել Խուդոյան/
3. Հոգեբանություն /Սիրինա Առաքելյան/
4. Հոգեբանություն /Արամ Գյուրջյան/:

Իրականացնվել են ավագ դպրոցականների սոցիալ-հոգեբանական գիտելիքների աճին ուղղված միջոցառումներ, ավագ դպրոցականների հոգեբանական նախապատրաստական աշխատանքներ, խորհրդատվություններ /առցանց, մանկավարժական պրակտիկաների իրականացման գործընթացում/:

Ամբիոնների դասախոսները մշակել են հեռուստատեսության, ռադիոյի կամ էլեկտրոնային հարթակների համար դասախոսություններ, ծրագրեր, նախագծեր /Հակոբյան Մ., Վարդանյան Լ.:

ֆակուլտետում իրականացվել են նաև մասնագիտական ԿԾ-ների առանձնահատկությունների, դասավանդվող առարկաների, հեռանկարների և պայմանների մասին դիմորդների իրազեկման գործընթաց, որի ընթացքում ապագա դիմորդները հնարավորություն են ունեցել այցելել ֆակուլտետ, մասնակցել ուսումնական գործընթացին, վարպետաց դասերին

Ֆակուլտետի վարկանիշը բարձրացնելու նպատակով իրականացվել են նաև հոգեբանական գիտելիքի մասսայականացմանը, ֆակուլտետի ՊԴԱ-ի գիտելիքներն և գործունեության արդյունքները ներկայացնող միջոցառումներ: Մասնավորապես 2020 թվականի ձետրվարի 17-19-ը ֆակուլտետում հայտարարվել էին բաց դռների օրեր, որոնց ընթացքում մի շարք դպրոցների ուսուցիչներ, հոգեբաններ, սոցիալական մանկավարժներ, ապագա դիմորդներ ծանոթացան համալսարանի, ֆակուլտետի և մասնագիտությունների հետ, անցկացվեցին մասնագիտությունների էքսպո, վարպետաց դասեր, այցելուները կարողացան նաև ծանոթանալ հոգեբանական գրականության հետ, որը նույնպես ցուցադրված էր:

Ֆակուլտետի ՊԴ կազմը իրկանացրել է նաև անհատական խորհրդատվություններ, տրամադրվել է տեղեկատվություն մասնագիտությունների, ընդունելության գործընթացի, ընդունելության քննությունների մասին:

Մասնագիտական կողմնորոշման գործընթացի արդյունավետության ապահովման նպատակով օգտագործվել են սոցիալական ցանցերը՝ որպես դիմորդների թիրախային խմբերի ներգրավման նորարական միջոց, ստեղծվել են հատուկ ինտրնետային խմբեր, քննարկման հարթակներ, առցանց խորհրդատվություն և դասախոսական անձնակազմի հետ հանդիպում, հարցերի պարզաբանում օլայն ռեժիմում:

Ռազմավարական ծրագրի <u>5**-րդ ուղղության՝** արդյունավետ կառավարում, ֆինանսական կայունություն</u>, նպատակների և խնդիրների ուղղությամբ իրականացվել են հետևյալ աշխատանքները:

Ֆակուլտետը և ՊԴԱ-ն արդյունավետորեն կիրառել են տեղեկատվական ռեսուրսները՝ ուսումնական և գիտահետազոտական նպատակով, ապահովվել է նրանց ակտիվությունը տեղեկատվական ռեսուրսների կիրառման գործընթացում:

Ֆակուլտետը դրամաշնորհային ծրագրերի, արտաբյուջետային միջոցների աղբյուրների ընդլայնման, վերապատրաստումների իրականացման ծրագրերի մշակման առումով դեռևս անելիքներ ունի:

Ռազմավարական ծրագրի 6<u>**-րդ ուղղության՝**</u> հանրային ներգրավում, սոցիալական համագործակցություն և ծառայություններ, նպատակների և խնդիրների ուղղությամբ իրականացվել են հետևյալ աշխատանքները:

Համավարակի և պատերազմական իրավիճակի պայմաններում հատուկ կարևորվել են հոգեբանների, սոցիալական մանկավարժների, սոցիալական աշխատողների մասնագիտական ուղեկցման աշխատանքները. խորհրդատվությունը: Ֆակուլտետի 3 ամբոինների ՊԴԱ-ն իրականացրել է կոնկրետ աշխատանքներ վերոնշյալ ուղղություններով:

<u>Հոգեբանության ամբիոն</u>

1. Վարդանյան Կամո - 04. 10. 2020 աշխատանք Աշտարակ քաղաքում զոհ ունեցող ընտանիքի հետ 05. 10. 2020 զոհ ունեցող ընտանիքների հետ աշխատանք
2. Արզումանյան Նվարդ - 29. 09. 2020-ից սկսած «Ամբեր» և «Արմենի» հյուրանոցներում աշխատանք Արցախից եկած ընտանիքների, երեխաների հետ:
3. Տաթևյան Հրաչյա – 29. 09. 2020-ից սկսած «Մեդ Լայն» ԲԿ-ում վերականգնողական աշխատանքներ վիրավորված զինվորների և կամավորների հետ:
4. Գևորգյան Հակոբ –27. 09. 2020 մարտական ծառայություն ՊՆ-ում,

5. Լաչինյան Լիլիթ – 28. 09. 2020-ից սկսած Դավթաշենի վարչական շրջան բերված Արցախցի երեխաների հետ աշխատանքներ:
6. Խաչատրյան Աննա – 29. 09. 2020-ից սկսած իր տանը ապաստան է տվել Արցախից եկած մի քանի ընտանիքների /թվով 10 մարդ, տարբեր տարիքային խմբեր/ և զուգահեռ հոգեբանական աջակցություն է ցուցաբերել նրանց: 04. 10. 2020-ից սկսած աշխատանք վիրավոր զինծառայողների հետ «Աստղիկ» ԲԿ-ում:
7. Խուդոյան Անի – 30. 09. 2020-ից սկսած սեփական նախաձեռնությամբ աշխատանք Արցախից եկած երեխաների հետ:
8. Կաթունյան Արաքսյա – 02. 10. 2020-ից սկսած «Աստղիկ» ԲԿ –ում վերականգնողական աշխատանքներ վիրավորված զինվորների և կամավորների հետ: 28. 09. 2020՝ երեխաների հոգեբանական աջակցմանն ուղղված առցանց սեմինարներ:
9. Մկրտումյան Մելս – 01. 10. 2020-ից սկսած «Աստղիկ» ԲԿ –ում վերականգնողական աշխատանքներ վիրավորված զինվորների և կամավորների հետ:
10. Մկրտումյան Լիլիթ - 01. 10. 2020-ից սկսած «Աստղիկ» ԲԿ –ում վերականգնողական աշխատանքներ վիրավորված զինվորների և կամավորների հետ:
11. Միքայելյան Մարինե – 02. 10. 2020-ից սկսած «Մալայանի անվան ակաբուժական» ԲԿ –ում վերականգնողական աշխատանքներ վիրավորված զինվորների և կամավորների հետ:
12. Հարությունյան Նաիրա - 02. 10. 2020-ից սկսած «Աստղիկ» ԲԿ –ում վերականգնողական աշխատանքներ վիրավորված զինվորների և կամավորների հետ: 28. 09. 2020-ից սկսած սեփական նախաձեռնությամբ կազմել է հոգեբանական խմբեր և հոգեբանական աջակցություն են ցուցաբերում Արցախից եկած երեխաներին:
13. Վարդանյան Լիլիթ - 01. 10. 2020-ից սկսած «Էրեբունի» ԲԿ –ում վերականգնողական աշխատանքներ վիրավորված զինվորների և կամավորների հետ:
14. Քոսակյան Վահրամ – 02. 10. 2020-ից սկսած «Աստղիկ» ԲԿ –ում վերականգնողական աշխատանքներ վիրավորված զինվորների և կամավորների հետ:
15. Գրիգորյան Գայանե- 02. 10. 2020-ից սկսած «Աստղիկ» ԲԿ –ում վերականգնողական աշխատանքներ վիրավորված զինվորների և կամավորների հետ:

Կիրառական հոգեբանության ամբիոնի ՊԴԱ-ն աշխատանքներ է իրականացրել վիրավորված զինվորների հետ „Աստղիկ" ԲԿ-ում: Ա.Բեջանյանը անմիջական աշխատանքներ է իրականացրել նաև Արցախում:

1. Առաքելյան Սիրինա
2. Սարգսյան Լևոն
3. Առաքելյան Աննա
4. Բեջանյան Արմեն
5. Խաչիկյան Գայանե

Սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոն

1. Մարկոսյան Գայանե - Սեպտեմբերի 27-ից սկսած համակարգել է Սփյուռքի աշխարհով մեկ հայտարարված բարեգործական դրամահավաքը:
2. Ասատրյան Գայանե – Հոկտեմբերի 4-ից կամավորական աշխատանք, որին ներգրավվել են նաև ֆակուլտետի 9 ուսանողներ:
3. Հովակիմյան Գայանե – Հոկտեմբերի 2-ից Իրավական և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոնում տվյալներ են հավաքագրել տարբեր աջակցող կենտրոններից տեղեկատվություն ստացել և կատարել տարբեր բնույթի մասնագիտական /հոգեբանական, սոցիալական աշխատողների/, աջակցող օգնություններ /գրենական պիտույքներ են տրամադրել, հագուստ և այլն/:
4. Ջիջյան Անահիտ – Սեպտեմբերի 27-ից սկսած ամեն օր տարբեր տեսակի հումանիտար օգնությունների հավաքում և ուղարկում, ինչպես նաև սոցիալական խորհրդատվության իրականացում Սուրբ Կաննա եկեղեցու կանանց միության հետ միասին:

Հաշվետու ժամանակահատվածում ռազմավարական ծրագրի 7-ՐԴ ՈՒՂՂՈՒԹՅԱՆ՝ արտաքին կապեր եվ միջազգային գործունեության ընդլայնում, նպատակների և խնդիրների ուղղությամբ նույնպես իրականացվել են մի շարք քայլեր, սակայն գործընթացները երբեմն ընդհատվել են՝ պայմանավորված թագավարակի համավարակով և պատերազմական իրավիճակով: Մասնավորապես իրականացվել են մի շարք քայլեր /տես՝ սույն հաշվետվության 10-րդ՝ ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ բաժնում:

## II. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

**Վերլուծել ֆակու հաշվետու տարում ֆակուլտետի կազմակերպական կառուցվածքի արդյունավետությունը՝ ըստ Պլանավորում, Իրականացում, Գնահատում, Բարելավում շրջափուլի: Խոսել ուսանողների, դասախոսների, գործատուների մասնակցության մասին:**

Ֆակուլտետն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ Սահմանադրությամբ, <<Կրթության մասին>>, <<Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին>> ՀՀ օրենքներով, Համալսարանի կանոնադրությամբ և համապատասխան այլ իրավական ակտերով, ինչպես նաև Համալսարանի և Ֆակուլտետի կառավարման մարմինների իրավասության շրջանակներում ընդունված իրավական ակտերով: Ֆակուլտետի խորհուրդը դեկանի նախագահությամբ գործող Ֆակուլտետի կառավարման մարմին է, որի որոշումները պարտադիր են Ֆակուլտետի սովորողների և աշխատողների համար:Ֆակուլտետի խորհրդի կազմը ձևավորվել է պրոֆեսորադասախոսական կազմից ,ուսանողության կողմից առաջադրված ներկայացուցիչներ (առնվազն 25 %)., ներքին և արտաքին շահառուներից և գործատուներից:Խորհրդում քննարկվում և լուծվում են ֆակուլտետի ուսումնական, գիտական աշխատանքների, միջազգային կապերի և այլ գործունեության հետ կապված հարցեր, գիտական խորհրդում հաստատելու համար ռեկտորին է ներկայացնում Ֆակուլտետի ուսումնական պլանները, սահմանված կարգի համաձայն՝ իրականացվում են Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի ընտրությունները, քննարկվում են ամբիոնների ուսումնամեթոդական և գիտահետազոտական աշխատանքների մասին հաշվետվությունները, Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտահետազոտական և կրթական աշխատանքների պլանավորման և որակավորման բարձրացման հարցերը,ուսանողների պրակտիկայի արդյունքները: Հաստատվում է Ֆակուլտետի զարգացման ծրագրերը,ասպիրանտների անհատական պլանները, ասպիրանտների ու հայցորդների տարեկան ատեստացիայի արդյունքները: Մշակվում և իրականացվում են միջոցառումներ Ֆակուլտետի պրոֆեսորդասախոսական կազմի գիտահետազոտական և որակավորման, ուսանողների կրթության որակը բարձրացնելու և Ֆակուլտետում կրթության որակի ապահովման հարցերը: Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմը և ուսանողները կառավարման գրեթե բոլոր մակարդակներում անմիջականորեն մասնակցում են որոշումների ընդունման գործընթացին, նրանց մասնակցությունը կառավարման մարմիններում կանոնակարգված է, իսկ նրանց ընտրությունն այդ մարմիններում իրականացվում է համաձայն գործող ընթացակարգի՝ ներքևից վերև: Ֆակուլտետի խորհրդի կազմը բաղկացած է 25 ներկայացուցչից:

Կրթության հոգեբանության ֆակուլտետի դեկանն է հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Ռուզաննա Համբարձումի Պետրոսյանը, դեկանի ուսումնական աշխատանքների գծով տեղակալն է հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Լիդա Ռազմիկի Արամյանը, գիտական և միջազգային համագործակցության հարցերով տեղակալն է հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Սոնա Արտակի Մակիչյանը: Ֆակուլտետի կազմում գործում են երեք հիմնական ամբիոններ: Հոգեբանության ամբիոնի վարիչի պաշտոնակատարն է եղել հոգեբանական գիտությունների դոկտոր, Վազգեն Հենրիկի Մարգարյանը /ՀՊՄՀ-ի ռեկտորի 2017թ հուլիսի 11-ի թիվ 2447-Ա հրամանի համաձայն/, սակայն վերջինիս մահվան պատճառով ամբիոնի վարիչի պարտականությունների կատարումը վերապահվել է նախ ֆակուլտետի դեկան Ռուզաննա Համբարձումի Պետրոսյանին /ՀՊՄՀ-ի ռեկտորի 17.06.2020 թ. թիվ 1593-Ա հրաման/, ապա Գիտահետազոտական կենտրոնի ղեկավար Կամո Երեմի Վարդանյանին /ՀՊՄՀ-ի ռեկտորի 04.09.2020 թ. թիվ 2138-Աhրաման/: Կիրառական հոգեբանության ամբիոնի վարիչ է եղել հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սամվել Սուրենի Խուդոյանը, սակայն վերջինիս մահվան կապակցությամբ ամբիոնի վարիչի պարտականությունների կատարումը վերապահվել է Ուսումնագիտական գծով պրոռեկտոր, հ.գ.դ., պրոֆեսոր Սրբուհի Ռաֆիկի Գևորգյանին /ՀՊՄՀ-ի ռեկտորի 08.12.2020թ. թիվ 3324-Ա հրաման/, Սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոնի վարիչի պարտականությունները կատարել է սոցիոլոգիական գիտությունների թեկնածու, դոցենտ Վիգեն Մաթևոսի Շամիրյանը /ՀՊՄՀ-ի ռեկտորի 2019թ նոյեմբերի 26-ի թիվ 3975-Ա հրամանի համաձայն/, վերջինիս՝ իր դիմումի համաձայն աշխատանքից ազատվելու հետո ամբիոնի վարիչի պարտականությունները ստանձնել է նախ Ավետիք Մեջլումյանը /ընդունման հրաման՝ 04.05.2020 թիվ 1252-Ա, ազատման հրաման՝ 01.07.2020, թիվ 1767-Ա/, ապա դրանց կատարումը վերապահվել է ֆակուլտետի դեկան Ռուզաննա Պետրոսյանին /հրաման՝ 04.09.2020 թիվ 2139-Ա/: Ֆակուլտետը սպասարկում է նաև համահամալսարանական մանկավարժության ամբիոնը՝ սոցիալական մանկավարժություն մասնագիտությունը և բակալավրում և մագիստրատուրայում, ինչպես նաև մի շարք այլ համահամալսարանական ամբիոններ:

Ֆակուլտետը հաշվետու տարում հնարավորություն է տվել դասախոսներին և ուսանողներին մասնակցել իրենց առնչվող որոշումների կայացմանը հիմք՝ ամբիոնի նիստերի որոշումները և ֆակուլտետի խորհրդի կազմում կատարած գործունեությունը / դասախոսներին և ուսանողներին հնարավորություն է ընձեռնվել տարբեր օղակներում անմիջականորեն

մասնակցել թե՛ ֆակուլտետի, թե՛ ամբիոնների գործընթացներին և թե՛ համալսարանի վերաբերյալ որոշումների կատարումներին: ՊԻԳԲ շրջափուլի հիմնական սկզբունքներին համապատասխան ուսումնական տարվա սկզբին մշակվել, քննարկվել և հաստատվել են ամբիոնների և ֆակուլտետի խորհրդի աշխատանքային պլանները, որոնցում ընդգրկված հարցերը բխում են 2016-2020 թվականների ռազմավարական ծրագրի 2020 թվականի գործողությունների պլանի ֆայլերից:Պարբերաբար քննարկվել են ներքին և արտաքին շահառուների առնչվող հարցերը,վեր են հանվել կրթության գործընթացի կազմակերպման և որակի ապահովման խնդիրները /հիմք ֆակուլտետի խորհրդի արձանագրությունները/:Հաշվետու ժամանակահատվածում ֆակուլտետի խորհրդի 2020-21 ուս. տարվա աշխատանքային պլանում քննարկման են դրվել կիսամյակային քննաշրջանի արդյունքները, բակալավրի կրթական ծրագրի մանկավարժական, ուսումնական և մագիստրոսի կրթական ծրագրի մասնագիտական պրակտիկաների կազմակերպման արդյունքները, մագիստրոսական թեզերի ,ավարտական և կուրսային աշխատանքների թեմաների քննարկումը հաստատումը,հեռակա ուսուցման համակարգի ուսումնական գործընթացների կազմակերպման հարցեր,Քննարկվել են նաև ամբիոնների ասպիրանտների և հայցորդների ատեստավորման արդյունքները,, ինչպես նաև Կրթության որակի բարելավմանն ուղղված անելիքների մասին:

Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմից երկուսը՝ դեկան Ռ.Պետրոսյանը, Կիրառական հոգեբանության ամբիոնի վարիչ Ս. Խուդոյանը, իսկ ուսանողներից՝ սոցիալական մանկավարժություն մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի Սվետլանա Սարգսյանը և Սոցիոլոգիա մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի Սեդա Պետրոսյանը ներգրավված են գիտական խորհրդում, կառավարման խորհրդում՝ դասախոսներից Կ. Վարդանյանը: Ֆակուլտետի ուսումնական գործընթացն կառավարվում և իրականացվում է համալսարանի Կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչության կողմից ընդունված և հաստատված ուսումնական պլանների, ծրագրերի, հաստատված գրաֆիկների, դասացուցակների հիման վրա:

## III. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

**Վերլուծել ֆակուլտետում ՄԿԾ-ների բարելավման ուղղությամբ տարված աշխատանքները, նշել ուսումնառության ակնկալվող արդյունքների համահունչ լինելը և համադրելիությունը մասնագիտական որակավորմանը և Որակավորումների ազգային շրջանակին:**

Հաշվետու ժամանահատվածում ֆակուլտետում հիմնականում իրականացվել են ինչպես ուսումնական, ակնկալվող վերջնարդյունքների ձեռքբերման գործընթացի արդյունավետությունն ապահովող , այնպես էլ ՄԿԾ-ների բարելավման ուղղությամբ աշխատանքներ:

Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետ բոլոր մասնագիտություններով՝ Հոգեբանություն, Սոցիալական մանկավարժություն, Սոցիոլոգիա, Սոցիալական աշխատանք առաջին կուրս ընդունված ուսանողների ընդունելությունը կազմակերպվել է սույն թվականի սեպտեմբերի 1-ին երկու հերթափոխով: Պայմանավորված հանրապետությունում գործող արտակարգ իրավիճակով և բուհի կողմից հանձնարարված ձևաչափով ուսանողների թիվը տրոհվել է ենթախմբերի՝ ձևավորելով պահանջված խմբերը:

Ֆակուլտետի դեկանատի և ամբիոնների պատասխանատուները ձևավորել են 1-ին կուրսի ուսանողների էլեկտրոնային հասցեները առցանց ուսուցման՝ classroom էլեկտրոնային համակարգին կցվելու համար:

Կազմակերպվել են տեղեկատվական հանդիպումներ ֆակուլտետի դեկանատի և ամբիոնների պատասխանատուների մասնակցությամբ կրեդիտային համակարգին ծանոթացնելու, էլեկտրոնային հասցեները տրամադրելու և classroom հարթակում առցանց ուսուցման՝ էլեկտրոնային համակարգին կցվելու համար:

Կազմակերպվել են ֆակուլտետի ամբիոնների նիստեր որտեղ քննարկվել են 1-ին կուրսի մագիստրոսների և 4-րդ կուրսերի ավարտական թեզերի խորագրերը: Շաբաթական մեկ օր առերես հանդիպումներ են կազմակերպվել 4-րդ կուրսերի ուսանողների հետ:

Հեռակա ուսուցման համակարգի 1-ին կուրսի ուսանողների համար ստեղծվել են էլեկտրոնային հասցեներ, 2-րդ և 3-րդ կուրսերի խորհրդատվական դասընթացների էլեկտրոնային գրաֆիկներ առկա հղումներով: 2020-2021թ-ի հեռակա ուսուցման բակալավրիատի էլեկտրոնային դասընթացների կազմակերպման համար ֆակուլտետի ամբիոնների առցանց պատասխանատուները

Classroom հարթակում ստուգել և տեղայնացրել են 1-ից 3-րդ կուրսերի դասընթացները, նկարագրերն ու հարցաշարերը, ինչպես նաև ուսումնական նյութերը առանձին թեմաներով:

Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի առկա ուսուցման 2019-2020 ուս. տարվա 2-րդ կիսամյակի Հոգեբանություն մասնագիտության բակալավրիատի 2-րդ կուրսի ուսանողների ուսումնաճանաչողական պրակտիկան կազմակերպվել է փետրվարի 25- մայիսի 19 ժամանակահատվածում: Պրակտիկան իրականացվել է հետևյալ դպրոցներում և կենտրոններում՝

1. Երևանի Պ. Ցավրովի անվան թիվ 131 հիմնական դպրոցում
2. Երևանի թիվ 100 հիմնական դպրոցում
3. Երևանի թիվ 104 հիմնական դպրոցում
4. Երևանի Հայրապետ Հայրապետյանի անվան թիվ 78 հիմնական դպրոցում
5. Երևանի «Բանալի» ընտանիքի կենտրոնում:

Իրականացվել են հիմնական նախապատրաստական աշխատանքները

- Դպրոցների հետ նախնական պայմանավորվածության ձեռքբերում:
- Հանդիպում-քննարկումներ ուսանողների հետ:
- Աշխատանքների պլանավորման և իրականացման ցուցումներ դպրոցների մասնագետներին:
- Պրակտիկայի մեկնարկային կոնֆերանսի անցկացում:
- Առցանց ուսուցման պայմանների ստեղծում:
- Մեթոդիստներին, հոգեբաններին և մանկավարժներին տրվել են խմբերի աշխատանքային պլանների կազմման ցուցումներ՝ ըստ ուսումնաճանաչողական պրակտիկայի նկարագրի:

Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի հեռակա ուսուցման 2019-2020 ուս. տարվա 2-րդ կիսամյակի Հոգեբանություն մասնագիտության բակալավրիատի 3-րդ կուրսի ուսանողների մանկավարժական պրակտիկան կազմակերպվել է փետրվարի 10-ից մինչև մարտի 16 –ը (4 շաբաթ, շաբաթական մեկ օր ): Պրակտիկան իրականացվել է հետևյալ դպրոցներում և կենտրոններում՝

1. Երևանի Պ. Ցավրովի անվան թիվ 131 հիմնական դպրոցում
2. Երևանի թիվ 100 հիմնական դպրոցում
3. Երևանի թիվ 104 հիմնական դպրոցում
4. Երևանի «Ապագա» հոգեբանական ծառայությունների կենտրոն
5. Երևանի Գալինա Ստարավոյտովայի անվան թիվ 177 հիմնական դպրոցում
6. 10 ուսանողների մանկավարժական պրակտիկան կազմակերպվել է մարզային բազաներում:

Իրականացվել են հիմնական նախապատրաստական աշխատանքները՝

- Հանդիպում-քննարկումներ ուսանողների հետ, մարզային բազաների ներկայացում, ուսանողների խմբերի ստեղծում:
- Աշխատանքների պլանավորման և իրականացման ցուցումներ դպրոցների մասնագետներին:
- Պրակտիկայի մեկնարկային կոնֆերանսի անցկացում, խմբերի ներկայացում և թղթապանակների տրամադրում:
- Մեթոդիստներին տրվել են խմբերի աշխատանքային պլանների կազմման ցուցումներ՝ ըստ մանկավարժական պրակտիկայի նկարագրի:

Սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոնի հետազոտական աշխատանքների արդյունքները ներկայացվում են միջազգային և հանրապետական գիտաժողովների շրջանակներում հաշվետու տարում ամբիոնի ՊԴԱ - ի անդամները մասնակցել են 14

գիտաժողովներին, վեբինարներին, կլոր սեղաններին, որտեղ ներկայացրել են իրենց գիտական աշխատանքները և ստացել համապատասխան սերտիֆիկատներ:

Հետազոտական աշխատանքները ծավալվեն են նաև պրակտիկայի շրջանակներում /համագործակից կառույցներում և կենտրոններում/: Երկրում տիրող արտակարգ դրությամբ պայմանավորված հետազոտությունների իրականացվել են հիմնականում օնլայն տարբերակով՝ կիրառելով google հարթակի հնարավորությունները:

Պրակտիկայի բազաներն են.

Բակալավրիատ, Սոցիոլոգիա՝

- ՀՊՄՀ-ի Կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչություն
- ՀՊՄՀ-ի «Շախմատ» գիտահետազոտական ինստիտուտ
- Հայաստանի գործատուների հանրապետական միություն
- «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպություն /Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն/

Բակալավրիատ, Սոցիալական աշխատանք՝

- Հայ օգնության փոնդի «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամ
- Կարմիր խաչ
- Առաքելություն Հայաստան ԲՀԿ
- «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպություն /Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն/
- «Փրկություն» հաշմանդամ երեխաների և երիտասարդների կետրոն բարեգործական հասարակական կազմակերպություն

Առկա և հեռակա ուսուցման բակալավրիատի 2019-2020 ուս. տարվա 2-րդ կիսամյակի սոցիալական աշխատանք մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողների ուսումնական պրակտիկայի շրջանակներում իրականացվել է Հայաստանում ընտանիքների կարիքի գնահատում և աջակցության տրամադրում:

Կազմակերպված ուսումնական պրակտիկաների շրջանակներում յուրաքանչյուր ուսանող առաջին անգամ մասնակցել է սոցիալական դեպքի վարման շրջանակներում իրականացվող աշխատանքներին, /հարցազրույցի պլանի կազմում, տունայց, կարիքի գնահատում, սոցիալական պատմության և միջամտության պլանի կազմում, վերլուծություն, եզրակացություններ և առաջարկներ/:

Պրակտիկայի շրջանակներում ուսանողների համար կազմակերպվել են օնլայն հանդիպումներ սոցիալական աշխատանքի պրակտիկ դաշտի վերոհիշյալ կառույցների հմուտ մասնագետների հետ:

- Առկա ուսուցման մագիստրատուրայի 2019-2020 ուս. տարվա 2-րդ կիսամյակի սոցիալական աշխատանք մասնագիտության 1-ին կուրսի 3 ուսանողներ անցել են մասնագիտական պրակտիկա ՀՊՄՀ - ի ԿՀՍ փակուլտետի բակալավրիատի բազայի հիման վրա :

Պրակտիկայի ընթացքում մագիստրանտները ծանոթացել են դասավանդվող մասնագիտական առարկաների ծրագրերին, հարցաշարերին, մեթոդաբանությանը և արդեն իսկ մշակված գործիքակազմին, ինքնուրույն կազմել են դասախոսության պլան և սեմինարի ծրագիր, իրականացրել են դասավանդման և գործնական պարապունք:

-Առկա ուսուցման բակալավրիատի 2019-2020 ուս. տարվա 2-րդ և 2020-2021 ուս.տարվա 1-ին կիսամյակների սոցիոլոգիա մասնագիտության 3-րդ և 4-րդ կուրսի ուսանողների ուսումնական պրակտիկան կազմակերպվում է ՀՊՄՀ-ի Կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչությունում:

Ուսումնական պրակտիկայի բուն աշխատանքային փուլում, աշխատանքային պլանի ժամանակացույցին համապատասխան, կազմակերպվել և իրականացվել են սոցիոլոգիական հետազոտություններ: Ուսումնական պրակտիկայի շրջանակներում ուսանողների կողմից իրականացվել են և՛ քանակական, և՛ որակական հետազոտություններ՝ սոցիոլոգիական տարբեր մեթոդների զուգակցմամբ: Հետազոտությունները անցկացրել են ուսանողները, ինչի նպատակն է դասընթացին զուգահեռ ստացած հմտությունները կիրառել կոնկրետ օրինակի վրա ողջ փուլերով. հետազոտության ծրագրի կազմում, հարցաթերթի/հարցաշարի կազմում, հարցում/հարցազրույցներ, կոդավորում, տվյալների բազայի ստեղծում, տվյալների մուտքագրում, վիճակագրական մշակում, վերլուծություն և հաշվետվության կազմում:

- Առկա ուսուցման բակալավրիատի 2019-2020 ուս. տարվա 2-րդ կիսամյակի սոցիալական աշխատանք մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողների ուսումնական պրակտիկան կազմակերպվել էր առցանց: Պրակտիկայի նպատակն էր՝ կիրառել ձեռք բերված տեսական գիտելիքները՝ սոցիալական աշխատանքի մեթոդների, մոդելների, խորհրդառուի հետ կապի հաստատման մեթոդիկաները, նրանց խնդիրների լուծմանն ուղղված քայլերի մշակումը, ինքնուրույն իրականացնել դեպքի վարումը, համայնքի սոցիալական կարիքների բացահայտման, գնահատման և հաղթահարման ուղիների մշակմանն ուղված:

Պրակտիկայի ընթացքը հիմնականում տեղի է ունեցել առցանց՝

Մշակվել են համայնքի սոցիալական ծառայությունների քարտեզագրման գործիքակազմ, որն իր մեջ ընդգրկում է դիտարկման թերթիկներ և հարցաշարեր

ներգրավված դիտարկման միջոցով ծանոթացել են իրենց համայնքում իրականացվող սոցիալական ծառայություններ մատուցող հաստատությունների ռազմավարությանը, գործունեության կանոնակարգին, խորհրդառուների հիմնախնդիրներին,

- զարգացվել են մասնագիտական հմտություններ սոցիալական պատմության կազմման համար անհրաժեշտ տեղեկությունների ստացման և ընտրության հարցում,
- մշակվել են հիմնախնդրի լուծման համար անհրաժեշտ քայլերը, կազմվել են անհատական և զարգացման ծրագրեր:

Իրականացված պրակտիկայի արդյունքում սոցիալական աշխատանքի բակալավրի ուսանողները ձեռք են բերել մասնագիտական հմտություններ և խորացրել են իրենց գիտելիքները:

Իրականացված պրակտիկայի արդյունքում յուրաքանչյուր ուսանող ինքնուրույն կատարել է առանձին սոցիալական դեպքի վարում, համայնքի սոցիալական ծառայությունների քարտեզագրում:

Մագիստրոսական կրթության բոլոր մասնագիտությունների ըստ գործող պլանների 1-ին կուրսի 2-րդ կիսամյակի և 2-րդ կուրսի 1-ին կուրսի մասնագիտական պրակտիկաները կազմակերպվել են բակալավրի հենքի վրա, որոնց ընթացքում ուսանողները ծանոթացել են դասավանդվող մասնագիտական առարկաների նկարագրերին, հարցաշարերին, մեթոդաբանությանը և արդեն իսկ մշակված գործիքակազմին, ինքնուրույն կազմել են դասախոսության պլան և սեմինարի ծրագիր, իրականացրել են դասավանդման և գործնական պարապունքներ

Վերլուծել ֆակուլտետում ուսումնառության արդյունքներին համապատասխան ֆակուլտետում/ամբիոններում սահմանված գնահատման մեթոդներն ու չափանիշները, ակադեմիական ազնվություն ապահովող միջոցառումները, գրագողության դեմ իրականացվող պայքարի քայլերի արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Ուսումնառության արդյունքներին համապատասխան ֆակուլտետում սահմանված գնահատման մեթոդներն ու չափանիշները համարժեք են առարկայական նկարագրերում ներկայացված վերջնարդյունքներին, քննարկվում են ամբիոնների և ֆակուլտետի խորհրդի նիստերում:

Ֆակուլտետի աշխատանքները ուսանողների և դասավանդողների շարժունությանը, միջազգայնացմանը նպաստելու ուղղությամբ:

Այս ուղղությամբ հաշվետու ժամանակահատվածում բավարար աշխատանքներ չեն իրականացվել՝ պայմանավորված համավարակի պայմաններով:

IV. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

Ֆակուլտետում հաշվետու տարում իրականացված ուսանողների հավաքագրման աշխատանքները, մեխանիզմները:

2020-2021 ուս.տարվա առկա ուսուցման 1-ին կուրս են ընդունվել 251 ուսանող, որից 174 ուսանող բակալավր իսկ 77 ուսանող մագիստրատուրա համակարգ:

Վճարովի համակարգ **/25.09.2020** թիվ **2569-Ա-Ա** /

Հոգեբանություն – 113 ուսանող,

Սոցիալական աշխատանք – 13 ուսանող

Սոցիալական մանկավարժություն – 17 ուսանող

Սոցիոլոգիա-20 ուսանող

Անվճար համակարգ **/04.08.2020,** թիվ **1819-Ա, 28.08.2020** թիվ **1967-Ա,** /

Հոգեբանություն – 3 ուսանող, որից 1 սփյուռք /25.09.2020, թիվ 2556-Ա/

Սոցիալական աշխատանք – 3 ուսանող

Սոցիալական մանկավարժություն – 2 ուսանող

Սոցիոլոգիա - 3 ուսանող

Ընդամենը՝ 174 ուսանող



2020-2021 ուստարվա առկա ուսուցման մագիստրատուրա 1-ին կուրս են ընդունվել 77 ուսանող ֆակուլտետի համապատասխան բաժինները կատարել են ընդունելություն մագիստրատուրա՝ հետևյալ մասնագիտությունների գծով.

Վճարովի համակարգ /25.09.2020, 2566-Ա/

- ❑ Հոգեբանություն- 6 ուսանող
- ❑ Զինվորական հոգեբանություն-4 ուսանող
- ❑ Կլինիկական հոգեբանություն և հոգեթերապիա-11 ուսանող
- ❑ Անձի հոգեբանություն և հոգեբանական խորհրդատվություն-9 ուսանող
- ❑ Գործնական հոգեբանություն-4 ուսանող
- ❑ Իրավաբանական հոգեբանություն-4 ուսանող
- ❑ Ընտանիքի հոգեբանություն-5 ուսանող
- ❑ Մանկավարժական հոգեբանություն-4 ուսանող
- ❑ Սոցիալական և քաղաքական հոգեբանություն- 2 ուսանող
- ❑ Սոցիալական մանկավարժություն-6 ուսանող
- ❑ Սոցիալական աշխատանք-7 ուսանող

Անվճար համակարգ /06.07.2020, 1718-Ա /

- ❑ Հոգեբանություն- 1 ուսանող
- ❑ Զինվորական հոգեբանություն- 1 ուսանող,
- ❑ Գործնական հոգեբանություն-1 ուսանող
- ❑ Իրավաբանական հոգեբանություն- 1 ուսանող
- ❑ Կլինիկական հոգեբանություն և հոգեթերապիա-1 ուսանող
- ❑ Անձի հոգեբանություն և հոգեբանական խորհրդատվություն-1 ուսանող
- ❑ Սոցիալական և քաղաքական հոգեբանություն-1 ուսանող
- ❑ Ընտանիքի հոգեբանություն-1 ուսանող
- ❑ Մանկավարժական հոգեբանություն-1 ուսանող
- ❑ Սոցիոլոգիա-2 ուսանող
- ❑ Սոցիալական մանկավարժություն-1 ուսանող
- ❑ Սոցիալական աշխատանք-3 ուսանող

Ընդամենը՝ 77 ուսանող




2020-2021թ. ուստարվա հեռակա ուսուցման բակալավրիատի 1-ին կուրս են ընդունվել 80 ուսանող:

Վճարովի համակարգ

Հոգեբանություն 031301.01.6 -54 ուսանող

Սոցիալական աշխատանք 092301.01.6 – 8 ուսանող

Սոցիալական մանկավարժություն 011301.03.6 – 7 ուսանող

Սոցիոլոգիա 031401.01.6 - 11 ուսանող




| Ֆակուլտետում ուսանողների թիվը՝ ըստ կրթական ծրագրերի և ուսուցման ձևերի: | | |
|---|---|---|
| Բակալավրի | առկա | 692 ուսանող |
| | հեռակա | 556 ուսանող |
| Մագիստրոսի | առկա | 131 ուսանող |
| | հեռակա | - |

Ուսումնառողների շարժը հաշվետու տարվա կտրվածքով

Ֆակուլտետում 7 ուսանող հեռակա ուսուցման համակարգից տեղափոխվել են առկա ուսուցման համակարգ ընտրելով նույն մասնագիտությունը, պատկերը գրաֆիկում.

Վերջին 5 ուսումնական տարիների ընթացքում ֆակուլտետում բակալավրիատի և մագիստրոսական կրթության բոլոր մասնագիտությունների գծով ընդունված ուսանողների թիվը՝




Նույն մասնագիտության առկա ուսուցման համակարգից հեռակա ուսուցման համակարգ են տեղափոխվել 2 ուսանող:

| Ուսանողների ներհոսք | | |
|---|---|---|
| Յաստատություն/երկիր Յեռակա | | թիվ |
| 1 | Արմավիրի տարածաշրջանային պետական քոլեջից հեռակա ուսուցման համակարգի Սոցիալական աշխատանք մասնագիտության 2-րդ կուրս | 3 |
| 2 | Երևանի Պետական հենակետային բժշկական քոլեջ ՊՈԱԿ, հեռակա ուսուցման համակարգի Հոգեբանություն 2-րդ | 2 |
| 3 | Արմավիրի պետական ինդուստրիալ-մանկավարժական քոլեջ հեռակա ուսուցման համակարգի Սոցիալական մանկավարժություն 2-րդ կուրս | 1 |
| 4 | Գավառի պետական բժշկական քոլեջից հեռակա ուսուցման համակարգի Հոգեբանություն մասնագիտության 2-րդ կուրս | 1 |
| 5 | Արարատի տարածաշրջանային պետական քոլեջից հեռակա ուսուցման համակարգի Հոգեբանություն մասնագիտության 2-րդ կուրս | 3 |
| 6 | ՀՀ ԿԳՄՍՆ Սևանի պետական քոլեջ ՊՈԱԿ հեռակա ուսուցման համակարգի Սոցիոլոգիա մասնագիտության 2-րդ կուրս | 1 |
| 7 | Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ ՓԲԸ Միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատություն հեռակա ուսուցման համակարգի Հոգեբանություն մասնագիտության 2-րդ կուրս | 1 |
| | Առկա | |

| | | | |
|---|---|---|---|
| 8 | Երևանի Պետական հենակետային բժշկական քոլեջ ՊՈԱԿ, առկա ուսուցման համակարգի Հոգեբանություն 2-րդ | | 1 |

**Ուսանողների արտահոսք**

| | Հաստատություն/երկիր | թիվ |
|---|---|---|
| 1 | Առկա ուսուցման համակաՐգից/ իՐ Դիմումի համաձայն/ | 12 ուսանող |
| 2 | Առկա ուսուցման համակաՐգից/ հեռացված/ | 18 ուսանող |
| 3 | Հեռակա ուսուցման համակաՐգից/ իՐ Դիմումի համաձայն / | 7 ուսանող |
| 4 | Հեռակա ուսուցման համակաՐգից/ հեռացված/ | 2 ուսանող |
| 5 | - | - |

| | Հեռացումներ և վերականգնումներ | տոկոս | թիվ |
|---|---|---|---|
| 1 | Դուրս մնացած ուսանողների տոկոսը/ թիվը | 2.8 % | 39 |
| 2 | Վերականգնված ուսանողների տոկոսը/ թիվը | 1.1 % | 16 |

**Վերլուծել ֆակուլտետի ուսանողների հավաքագրման իրականացման մեխանիզմների արդյունավետությունը:**

2020 թվականին Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետում 2020-2021 ուստարվա ընդունելության ապահովման նպատակով իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

- Բաց դռների օրեր
- Այցելություններ դպրոցներ
- Աշխատանք սոցիալական կայքերում
- Անհատական խորհրդատվական աշխատանք

1. Բաց դռների օրերի շրջանակներում ֆակուլտետ են այցելել Այնթափի թիվ 2 միջնակարգ դպրոցի 2 աշակերտուհիներ, Երևանի թիվ 170 ավագ և թիվ 11 հիմնական դպրոցների թվով 23 աշակերտներ, Կոտայքի մարզի գ.Ջրվեժի միջնակարգ դպրոցի 29 աշակերտներ /10-12 դասարաններ/, Երևանի թիվ 65, 115 և 97 ավագ դպրոցների թվով 45 աշակերտներ: Ընդհանուր առմամբ 99 աշակերտ:

Կազմակերպվել են բաց դասեր /Կ.Վարդանյան, Ա.Առաքելյան, Ա.Մարտիրոսյան, Ք.Տանաջյան, Գ.Ասատրյան/: Այցելություններ Ծախմատի գիտահետազոտական ինստիտուտ /որտեղ աշակերտները ծանոթացել են էզոսկոպին/, թանգարան, գրադարան:

2. Փետրվարի 7-ին մասնագիտական կողմնորոշման աշխատանքներ են իրականացվել Նոր Հաճընի ավագ դպրոցում /Ռ.Պետրոսյան, Հ.Գևորգյան, Ս.Մակիչյան/, փետրվարի 14-ին՝ Երևանի թիվ 187 ավագ և Կոտայքի մարզի Ջրվեժի միջնակարգ դպրոցներում /Լ.Արամյան, Ս.Մակիչյան և Հ.Փալանդուզյան/:

3. Facebook սոցիալական ցանցում լուսաբանվել են բաց դռների օրերը, ինչին միացել են նաև ֆակուլտետի ուսանողական խորհուրդը և բուհ այցելած դպրոցների մանկավարժական կազմը և աշակերտները: Նման աշխատանքը գրանցել է արդյունավետության բարձր մակարդակ, ինչի արդյունքում դիմորդները անհատական կապ են հաստատել դասախոսների հետ՝ հետաքրքրվել են ֆակուլտետ ընդունվելու մանրամասներով /Կ.Վարդանյան/:

4. Անհատական խորհրդատվական աշխատանք է իրականավել նաև Քասախ գյուղի Ռոբերտ Գևորյանի անվան թիվ 1 դպրոցի աշակերտների հետ:

**Վերհանել հեռացումների և վերականգնումների պատճառները: (տեքստը այստեղ)**

**Հաշվետու տարում ֆակուլտետի ուսանողների ներգրավվածությունը մասնագիտական գիտահետազոտական աշխատանքներում:**

| Ֆակուլտետի գերակա գիտահետազոտական աշխատանքներում ներգրավված ուսանողների թիվը: | |
|---|---|
| Բակալավր | |
| Մագիստրոս | |
| Ընդհանուր | |

**Ուսումնառողների մասնակցությամբ իրականացվող ծրագրերի ցանկը և դրանցում ներգրավված ուսանողների թիվը**

| | Գիտահետազոտական ծրագիր | ուսանողների թիվ |
|---|---|---|

| | | |
|---|---|---|
| 1 | | |
| 2 | | |
| 3 | | |
| 4 | | |
| Ուսումնառողների հեղինակությամբ և/կամ համահեղինակությամբ տպագրված աշխատանքների թիվը | | |
| | Տպագրված աշխատանք | ուսանողների թիվ |
| 1 | | |
| 2 | | |
| 3 | | |
| 4 | | |

## V. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

| Վերլուծել ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքի արդյունավետությունը հաշվետու տարում և մասնագիտական որակների համապատասխանությունը ֆակուլտետի մասնագիտական կրթական ծրագրերի նպատակներին: |
|---|
| ՊԴԱ կազմի ձևավորման քաղաքականությունը և ընթացակարգերը ամրագրված են ՀՊՄՀ-ի կանոնադրությունում, ներքին կարգապահական կանոններում և պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման կանոնակարգում: Դասախոսական կազմի ընտրության համար ուղենիշ են ծառայում ՀՊՄՀ ռազմավարությունը, ֆակուլտետի ռազմավարական ծրագրի գործողությունների կատարման պլանը, ՄԿԾ-ի նպատակները: Ֆակուլտետը և ամբիոնները յուրաքանչյուր մասնագետի ներգրավման համար քննարկման են ենթարկում թեկնածուների բազային կրթությունը, աշխատանքային փորձը (ոլորտի)՝ իրականացնելով որակական գնահատում, հաշվի առնելով նաև ՄԿԾ-ի կարիքները ու նպատակները, հավակնորդի կարողությունների համապատասխանությունը մասնագիտության կրթական ծրագրերի սահմաններում շնորհվող որակավորումներին:<br><br>Ֆակուլտետի կրթական ծրագրերի պատասխանատու ամբիոնների ՊԴԱ գերակշիռ մասն ունի գիտական աստիճան: Մասնավորապես, հոգեբանության ամբիոնում մասնագիտական գործունեություն են իրականացնում հոգեբանական գիտությունների 3 դոկտոր, 18 թեկնածու և 10 դասախոս: Կիրառական հոգեբանության ամբիոնում մասնագիտական գործունեություն են իրականացնում հոգեբանական գիտությունների 5 դոկտոր, 15 թեկնածու և 2 դասախոս: Մասնագիտական կրթական ծրագրերի վերջնարդյունքների ապահովման գործընթացի արդյունավետության ապահովման նպատակով ամբիոնը համալրվել է 1 գիտության թեկնածուով: Սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոնն այս առումով ուներ որոշակի խնդիրներ, որոնք հաշվետու ժամանակահատվածում մասամբ լուծվել են գիտական աստիճան, կոչում ունեցող մասնագետներ հրավիրելու միջոցով: ՊԴԱ կազմում ընդգրկված են սոցիոլոգիական գիտությունների 1 դոկտոր, 10 գիտությունների թեկնածու, 10 դասախոս: Ամբիոնը համալրվել է 3 գիտությունների թեկնածուներով, որից 1-ը՝ դոցենտ:<br><br>Ֆակուլտետի ՊԴԱ հիմնական կազմը ամբողջովին ներգրավված է ամբիոնների գերակա գիտական ուղղությունների շրջանակներում իրականացվող հետազոտություններում: Հոգեբանության և Կիրառական հոգեբանության ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմից 4-ը ներգրավված են Գիտության պետական կոմիտեի դրամաշնորհային ծրագրերում:<br><br>Ֆակուլտետի ՊԴԱ կազմում ներգրավված են նաև գործատուներ, ոլորտի լավագույն պրակտիկ մասնագետներ, ինչը միտված է ֆակուլտետ-գործատու համագործակցության ընդլայնմանը, ուսանողների ուսումնական գործընթացի, մասնավորապես պրակտիկաների կազմակերպման, տեսականի և գործնականի համադրման, ուսանողների հետագա աշխատանքային գործունեության և մասնագիտական կայացման գործընթացների արդյունավետության ապահովմանը: |
| |

## VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

| Ֆակուլտետը հաշվետու տարում իրականացրել է հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն: |
|---|

Վերլուծել հաշվետու տարում ֆակուլտետում հետազոտական ոլորտում հետաքրքրությունների և հավակնությունների ռազմավարության արդյունավետությունը և արդիականությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի հետազոտական ոլորտի հետաքրքրությունները ու հավակնությունները համահունչ են 2016-2020 թվականների ռազմավարական ծրագրի նպատակներին ու դրույթներին: 2020 թվականի գործողությունների պլանով նախատեսվել և իրականացվել են հետևյալ քայլերը:

Շարունակվել են համալսարանի առաքելությունից բխող գիտական դպրոցների զարգացման աշխատանքները (հոգեբանության որոշակի գիտական ուղղության կամ թեմա զարգացնող գիտական ներուժ), <<Հոգեբանական հիմնախնդիրներ. բնութագրերը, դասակարգման և ախտորոշման սկզբունքները>> թեմայի ուղղությամբ հետազոտական աշխատանքները Կիրառական հոգեբանության ամբիոնում, որի հիմքերը դրվել են 2019 թվականին:

Գիտական թեմաներն ընտրվել են՝ ելնելով պետության, հասարակության և բուհի շահերից՝ հիմք ընդունելով արդիականության և շուկայի պահանջները, հնարավորության սահմաններում պահպանելով հաջորդականության և փոխլրացման սկզբունքները:

Ֆակուլտետը և ամբիոնները աջակցել են միջազգային և հանրապետական գիտական ծրագրերին ՊԴԱ-ի մասնակցությանը, ներգրավել երիտասարդ գիտնականներին, կամուրջ ստեղծել ավագ և երիտասարդ սերունդների միջև: Խրախուսվել են պետական և ոչ պետական կազմակերպությունների հետ համատեղ հետազոտական ծրագրեր իրականացնելու նախաձեռնությունները, ՊԴԱ-ի՝ տարբեր դրամաշնորհներին մասնակցությունը:

Ֆակուլտետում խթանվել է ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմի աշխատությունների հրատարակման ակտիվությունը հեղինակավոր, նաև միջազգային վարկանիշային ամսագրերում, հոգեբանական մասնագիտական գրականության թարգմանության և դասագրքաստեղծման գործունեությունը, գիտական արդիական մենագրությունների հրապարակումը: Միևնույն ժամանակ նկատվում է տպագրված աշխատանքների թվաքանակի մի փոքր նվազում՝ պայմանավորված 2020 թվականի թագավարակի պանդեմիայով:

**Ֆակուլտետի գործունեությունը հետազոտական գործունեության միջազգայնացման ուղղությամբ:**

ԱՊՀ երկրներում գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների թիվ

| | Ամսագիրը (երկիրը) | Վարկանիշը | Հրապարակումների թիվ |
|---|---|---|---|
| 1 | Национальный психологический журнал | Ринц | 1 |
| 2 | Вестник психотерапии | Ринц | 1 |
| 3 | Журнал неврологии и психиатрии им. С.С. Корсакова | Scopus<br>Ринц | 1 |
| 4 | Вестник Томского государственного университета. Культурология и искусствоведение | WoS | 1 |
| 5 | | | |

Օտարերկրյա միջազգային գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների ցանկը

| | Ամսագիրը (երկիրը) | Վարկանիշը | Հրապարակումների թիվ |
|---|---|---|---|

| | | | |
|---|---|---|---|
| 1 | Evolution in Polymer Technology Journal | ISSN: 2642-0864 | 1 |
| 2 | Сборник Международной научно-практической конференции «Историческая память и современные политические процессы» 28 октября 2020 г | | 1 |
| 3 | International Journal for Cross-Disciplinary Subjects in Education (IJCDSE) | IJCDSE (ISSN 2042-6364) | 1 |
| 4 | SPE (SCIENTIA PAEDAGOGICA EXPERIMENTALIS)Special issue "Teaching critical thinking". | ISSN 0582-2351 | 1 |
| 5 | SCIENTIFIC NEWS | ISSN 1829-0523 | 1 |
| 6 | ROCZNIK LUBUSKI, Yearbook Poland | The Central European Journal Of Social Sciences And Humanities, CEJSH Index Copernicus International Journals Master List, ICI The European Reference Index for the Humanities and the Social Sciences ERIH PLUS | 1 |

| | | | |
|---|---|---|---|
| 7 | 7" International Conference on Community Development in the ASEAN University of Muhammadiyah Malang (UMM), Indonesia, on July 18, 2020:In a process of publishing in a journal of Atlantis Press | (STM publisher: scientific, technical and medical). | 1 |
| ՀՀ-ում գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների ցանկը | | | |
| | Ամսագիրը | Վարկանիշը | Հրապարակումների թիվ |
| 1 | Main Issues Of Pedagogy And Psychology | | 5 |
| 2 | ԿԱճԱՌ<br>ՀՀ ԳԱԱ<br>Գիտական հոդվածների ժողովածու, ՀՀ ԳԱԱ, Գիտակրթական միջազգային կենտրոն | | 4 |
| 3 | Բանբեր, Եվրասիա միջազգային համալսարան | | 1 |
| 4 | Актуальные проблемы лингвистики и методики преподавания РКИ: Республиканская научно-практическая конференция (16-17 октября 2020г.). Сборник научных статей. – Ер.: Изд-во АГПУ, 2020 | | 1 |
| 5 | ПРОБЛЕМЫ РАЗВИТИЯ ЛИЧНОСТИ В | Ринц | 3 |

| | | | |
|---|---|---|---|
| | УСЛОВИЯХ ГЛОБАЛИЗАЦИИ : ПСИХОЛОГО-ПЕДАГОГИЧЕСКИЕ АСПЕКТЫ» II Международная научно-практическая конференция, Сборник трудов конференции, 2020 Российско-Армянский университет | | |
| 6 | Evolution in Polymer Technology Journal | | 1 |
| 7 | Հոգեկան առողջության հայկական հանդես | | 1 |
| 8 | Բանբեր Երևանի պետական համալսարան | | 1 |
| 9 | Լրաբեր հասարակական գիտությունների, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն | | 2 |
| 10 | Армянский журнал психического здоровья | | 2 |
| 11 | "Փիլիսոփայությունը արդի աշխարհում ՅՈՒՆԵՍԿՕ-ի հռչակած Փիլիսոփայության համաշխարհային օրվա կապակցությամբ հրավիրված գիտաժողովի նյութեր" | | 2 |

| | | | |
|---|---|---|---|
| 12 | «ՎԷՄ» համահայկական հանդես | | 1 |
| 13 | <<Հայ հասարակության զարգացման հիմնախնդիրները արդի ժամանակաշրջանում. մարտահրավերներն ու դրանց լուծումները>> գիտական հոդվածների ժողովածու | | 2 |
| 14 | ՀԱԻ աշխատությունները | | 1 |

Վերլուծել ֆակուլտետի հետազոտական գործունեության միջազգայնացման աշխատանքները հաշվետու տարում:

Հաշվետու ժամանակահատվածում ֆակուլտետի կրթական ծրագրերի պատասխանատու ամբիոնների ՊԴԱ կազմը իրենց հետազոտությունների արդյունքները տպագրել են օտարերկրյա պարբերականներում, քննարկել են միջազգային գիտաժողովների, կլոր սեղանների շրջանակներում, առցանց հարթակներում:

Մասնավորապես՝

1. ПРОБЛЕМЫ РАЗВИТИЯ ЛИЧНОСТИ В УСЛОВИЯХ ГЛОБАЛИЗАЦИИ: ПСИХОЛОГО-ПЕДАГОГИЧЕСКИЕ АСПЕКТЫ» II Международная научно-практическая конференция, Ереван, Российско-Армянский университет
2. Международная научно-практическая конференция «Историческая память и современные политические процессы» 28 октября 2020 года, РЭУ имени Г.В. Плеханова, Ереван
3. ONLINE LOCAL FORUM ON SOCIAL ENTREPRENEURSHIP IN FRAME OF“SOCIAL ENTREPRENEURSHIP: TOOLS ANDTRAINERS”ERASMUS PLUS PROJECT , 5th of september, 2020, online platform https://www.facebook.com/events/644111639571741/?acontext=%7B"source"%3A5%2C"action_history"%3A[%7B"surface"%3A"page"%2C"mechanism"%3A"main_list"%2C"
4. XIV Ковалевские чтения 14-16 ноября , 2020
5. IV ISA Forum of Sociology (October 15, 2020- February 23-27, 2021), online platform /https://www.isa-sociology.org/en/conferences/forum/porto-alegre-2021
6. Международный день социального бизнеса,28 июня 2020, https://www.facebook.com/events/641276373121966/?acontext=%7B"action_history"%3A[%7B"surface"%3A"page"%2C"mechanism"%3A"page_admin_bar"%2C"extra_data"%3A"%7B%5C"page_id%5C"%3A514892668988915%7D"%7D%2C%7B"surface"%3A"events_admin_tool"%2C"mechanism"%3A"events_admin_tool"%2C"extra_data"%3A"[]"%7D]%2C"has_source"%3Atrue%7D
7. Международный марафон "Бизнес с душой", окт.30-24ноя.,2020 / https://www.instagram.com/p/CGUkvW-Bcle/?igshid=1q2piool0y3sp&fbclid=IwAR2WVHNFd0pfyMuE5_8oekHFmTj9dT-_GIKcSs8QSHMrkANqZROeST98QuU
8. 7" International Conference on Community Development in the ASEAN University of Muhammadiyah Malang (UMM), Indonesia, on July 18, 2020, online platform, www.atlantis-press.com, contact@atlantis-press.com
9. Российский научный форум «Экология и общество: баланс интересов»,г.Вологда 16-20 ноября 2020 года./ http://eco2020.volnc.ru

**Ֆակուլտետի աշխատանքները հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման ուղղությամբ:**

Հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցվածության վերլուծություն: Հետազոտական գործունեությունը և ուսումնական գործընթացի փոխկապակցումն արտահայտող հիմքեր (գիտական աշխատանքներ ուսանողների մասնակցությամբ, հետազոտությունների շնորհիվ վերանայված ծրագրեր, այլ աշխատանքներ):

Հոգեբանության ամբիոնի դոցենտ հ.գ.թ. Լիդա Արամյանի հետազոտական աշխատանքի արդյունքները ներդրվել են մագիստրոսական կրթության Ընտրովի դասընթացներում/ Կոնֆլիկտի կառավարման տեխնոլոգիա/:
Հոգեբանության ամբիոնի դոցենտ հ.գ.թ. Սոնա Մակիչյանի հետազոտությունների արդյունքները ներդրվել և հաջողությամբ դասավանդվում են բակալավրի կրթական ծրագրի ,,Սոցիալական մանկավարժություն՛՛ մասնագիտության ,,Սոցիալական ադապտացիայի հոգեբանություն՛՛ դասընթացի և մագիստրոսական կրթության Ընտրովի դասընթացների շրջանակներում:

Կիրառական հոգեբանության ամբիոնը վերանայվել են ուսումնամեթոդական փաթեթները, հրատարակված դասագրքերի հիման վրա կազմվել են առարկաների նոր փաթեթներ: Օրինակ, ամբիոնի պրոֆեսոր Սուսաննա Փիլոյանը հրատարակել է ,,Ընդհանուր հոգեբանություն", ,,Զոոհոգեբանություն և մարդաբանություն" ձեռնարկները, որոնք դասընթացների ձևով ներկայացվում են ուսանողներին:

Սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոնի աշխատակիցների իրականացված հետազոտությունների արդյունքները ներառվում են դասավանդվող առարկաների բովանդակության մեջ՝ Գ.Մկոյան, Մշակույթի սոցիոլոգիա առարկայի դասընթացի շրջանակներում արդեն իսկ ներդրվել և հաջողությամբ ներկայացվում են հետազոտությունների արդյունքները:

## VII. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Վերլուծել առկա մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայրի՝ լսարանների, լաբորատորիաների, ուսումնական կաբինետների, արվեստանոցների, արհեստանոցների արդյունավետությունը՝ նշելով շահակիցների բավարարվածության աստիճանը:

Ֆակուլտետում առկա մասնագիտությունների կրթական ծրագրերը իրականացվում են անհրաժեշտ տեխնիկապես ապահոված լսարաններում: Ֆակուլտետը ունի 1 լաբորատորիա, որը միտված է ավելի արդյունավետ դարձնելու ուսանողներին գիտելիքների փոխանցման գործընթացը:

Ֆակուլտետը տեղակայված է բուհի հինգ ուսումնական շենքերից Խանջյան 5 հասցեի բարձրահարկ մասնաշենքի 7-րդ հարկում:Կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր է ծառայում 2-րդ հարկից 5 լսարան, 3-րդ հարկից 3 լսարան, 4-րդ հարկից 2 լսարան, 5-րդ հարկից 2 լսարան, 6-րդ հարկից 2 լսարան, 7-րդ հարկի 9 լսարան, 8-րդ հարկից 3 լսարան, 9-րդ հարկից 8 լսարանային ֆոնդերը որոշակի ժամերի/ 1-ին և 2-րդ հերթափոխեր/: Գործնական պարապմունքներ են կազմակերպվում նաև շահառու հաստատություններում:
Նշված լսարանային ֆոնդը 2020 թվականի ընթացքում օգտագործվել է միայն հունվարի 8-իդ մինչև մարտի 12-ն ընկած ժամանակահատվածը և 2020-21 ուսումնական տարվա մեկնարկին՝ սեպտեմբեր ամսին /բակալավր 1-ին կուրս՝ 01.09.2020թ.-14.09.20թ., մագիստրոս՝ 14.09.2020թ.-28.09.2020թ./: Հաշվետու ժամանակահատվածում դասապրոցեսը կազմակերպվել է հիմնականում առցանց տարբերակով:

## VIII. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Հաշվետու տարում ֆակուլտետի հաշվետվողականության գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը, հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի մեխանիզմներ:
Ֆակուլտետը և համապատասխան ստորաբաժանումները, ինչպես յուրաքանչյուր ուսումնական տարի, ներկայացրել են իրենց աշխատանքային գործունեության հաշվետվությամբ: Տարեկան հաշվետվությունը ներկայացվում է գիտական խորհրդում, որտեղ ներկայացուցչական սկզբունքով ներկայացված են ՊԴԱ-ն, ուսանողները, գործատուները:
Համավարակի և պատերազմական իրավիճակի պայմաններում հատուկ կարևորվել են հոգեբանների, սոցիալական մանկավարժների, սոցիալական աշխատողների մասնագիտական ուղեկցման աշխատանքները. խորհրդատվությունները: Ֆակուլտետի 3 ամբիոնների ՊԴԱ-ն իրականացրել է կոնկրետ աշխատանքներ վերոնշյալ ուղղություններով:
Հոգեբանության ամբիոն

1. Վարդանյան Կամո - 04. 10. 2020 աշխատանք Աշտարակ քաղաքում զոհ ունեցող ընտանիքի հետ 05. 10. 2020 զոհ ունեցող ընտանիքների հետ աշխատանք
2. Արզումանյան Նվարդ - 29. 09. 2020-ից սկսած «Ամբեր» և «Արմենի» հյուրանոցներում աշխատանք Արցախից եկած ընտանիքների, երեխաների հետ:
3. Տաթևյան Հրաչյա – 29. 09. 2020-ից սկսած «Մեդ Լայն» ԲԿ-ում վերականգնողական աշխատանքներ վիրավորված զինվորների և կամավորների հետ:
4. Գևորգյան Հակոբ –27. 09. 2020 մարտական ծառայություն ՊՆ-ում,
5. Լաչինյան Լիլիթ – 28. 09. 2020-ից սկսած Դավթաշենի վարչական շրջան բերված Արցախցի երեխաների հետ աշխատանքներ:
6. Խաչատրյան Աննա – 29. 09. 2020-ից սկսած իր տանը ապաստան է տվել Արցախից եկած մի քանի ընտանիքների /թվով 10 մարդ, տարբեր տարիքային խմբեր/ և զուգահեռ հոգեբանական աջակցություն է ցուցաբերել նրանց: 04. 10. 2020-ից սկսած աշխատանք վիրավոր զինծառայողների հետ «Աստղիկ» ԲԿ-ում:
7. Խուդոյան Անի – 30. 09. 2020-ից սկսած սեփական նախաձեռնությամբ աշխատանք Արցախից եկած երեխաների հետ:
8. Կաթունյան Արաքսյա – 02. 10. 2020-ից սկսած «Աստղիկ» ԲԿ –ում վերականգնողական աշխատանքներ վիրավորված զինվորների և կամավորների հետ: 28. 09. 2020՝ երեխաների հոգեբանական աջակցմանն ուղղված առցանց սեմինարներ:
9. Մկրտումյան Մելս – 01. 10. 2020-ից սկսած «Աստղիկ» ԲԿ –ում վերականգնողական աշխատանքներ վիրավորված զինվորների և կամավորների հետ:
10. Մկրտումյան Լիլիթ - 01. 10. 2020-ից սկսած «Աստղիկ» ԲԿ –ում վերականգնողական աշխատանքներ վիրավորված զինվորների և կամավորների հետ:
11. Միքայելյան Մարինե – 02. 10. 2020-ից սկսած «Մալայանի անվան ակնաբուժական» ԲԿ –ում վերականգնողական աշխատանքներ վիրավորված զինվորների և կամավորների հետ:
12. Հարությունյան Նաիրա - 02. 10. 2020-ից սկսած «Աստղիկ» ԲԿ –ում վերականգնողական աշխատանքներ վիրավորված զինվորների և կամավորների հետ: 28. 09. 2020-ից սկսած սեփական նախաձեռնությամբ կազմել է հոգեբանական խմբեր և հոգեբանական աջակցություն են ցուցաբերում Արցախից եկած երեխաներին:
13. Վարդանյան Լիլիթ - 01. 10. 2020-ից սկսած «Էրեբունի» ԲԿ –ում վերականգնողական աշխատանքներ վիրավորված զինվորների և կամավորների հետ:
14. Քոսակյան Վահրամ – 02. 10. 2020-ից սկսած «Աստղիկ» ԲԿ –ում վերականգնողական աշխատանքներ վիրավորված զինվորների և կամավորների հետ:
15. Գրիգորյան Գայանե- 02. 10. 2020-ից սկսած «Աստղիկ» ԲԿ –ում վերականգնողական աշխատանքներ վիրավորված զինվորների և կամավորների հետ:

<u>Կիրառական հոգեբանության ամբիոնի </u>ՊԴԱ-ն աշխատանքներ է իրականացրել վիրավորված զինվորների հետ ,,Աստղիկ" ԲԿ-ում: Ա.Բեջանյանը անմիջական աշխատանքներ է իրականացրել նաև Արցախում:

1. Առաքելյան Սիրինա
2. Սարգսյան Լևոն
3. Առաքելյան Աննա
4. Բեջանյան Արմեն
5. Խաչիկյան Գայանե

<u>Սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոն</u>

1. Մարկոսյան Գայանե - Սեպտեմբերի 27-ից սկսած համակարգել է Սինոփսիսի աշխարհով մեկ հայտարարված բարեգործական դրամահավաքը:
2. Ասատրյան Գայանե – Հոկտեմբերի 4-ից կամավորական աշխատանք, որին ներգրավվել են նաև ֆակուլտետի 9 ուսանողներ:
3. Հովակիմյան Գայանե – Հոկտեմբերի 2-ից Իրավական և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոնում տվյալներ են հավաքագրել տարբեր աջակցող կենտրոններից տեղեկատվություն ստացել և կատարել տարբեր բնույթի մասնագիտական /հոգեբանական, սոցիալական աշխատողների/, աջակցող օգնություններ /գրենական պիտույքներ են տրամադրել, հագուստ և այլն/:
4. Ջիջյան Անահիտ – Սեպտեմբերի 27-ից սկսած ամեն օր տարբել տեսակի հումանիտար օգնությունների հավաքում և ուղարկում, ինչպես նաև սոցիալական խորհրդատվության իրականացում Սուրբ Կաննա եկեղեցու կանանց միության հետ միասին:

## IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

Ֆակուլտետի համագործակցությունը տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ հաշվետու տարում:

Ներկայացնել արտաքին կապերի և միջազգայնացման գործընթացներում ֆակուլտետի միջոցառումները և հիմնական ձեռքբերումները: Վերլուծել համագործակցության արդյունավետությունը:

Ֆակուլտետը հաշվետու ժամանակահատվածում համագործակցել է տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ:

- Շարունակվել է համագործակցությունը ՀՀ Քննչական կոմիտեի հետ: 2020թ. Կիրառական հոգեբանության ամբիոնը ստացել է ՀՀ Քննչական կոմիտեի կողմից նշանակված 1 դատահոգեբանական փորձաքննություն, որը դեռևս ընթացքի մեջ է:
- Շարունակվել է համագործակցությունը Հայաստանի Հանրապետությունում Ռուսաստանի գիտության և մշակույթի կենտրոնի /Россотрудничество/, Ռուսաստանի Դաշնության Սանկտ-Պետերբուրգի պետական տնտեսագիտական համալսարանի /СПбГЭУ/, Սանկտ պետերբուրգի պետական համալսարանի /СПбГУ/, Մոսկվայի Հանրային կարծիքի ուսումնասիրման համառուսաստանյան կենտրոնի /ВЦИОМ/, Չերեպովեցի պետական համալսարանի /ЧГУ/, Սոցիոլոգիայի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնի հետ:
- Սույն թվականի սեպտեմբերի 27-ից սկզված զինված հակամարտության ընթացքում Ֆակուլտետի կրթական ծրագրերի պատասխանատու ամբիոնների ՊԴԱ ներկայացուցիչները համագործակցել են ՀՀ և Արցախի ՊՆ ստորաբաժանումների և ԱՆ բժշկական հաստատությունների հետ՝ մասնագիտական աջակցություն ցուցաբերելով զինվորներին, վիրավորներին, ՀՀ-ում ապաստան գտած հոգեբանական և սոցիալական աջակցության կարիք ունեցող ընտանիքներին /ավելի մանրամասն սույն հաշվետվության VIII. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ բաժնում/:
- Ամբիոնների ՊԴԱ-ն մասնակցել է համագործակցային միջազգային ծրագրերին
    - «Սփյուռքի ներուժի քարտեզագրման մոդելի մշակում ֆրանսահայերի ուսումնասիրության օրինակով», ՀՀ, ԳՊԿ, 2020-2023 /Ներսիսյան Սոնա, Տանաջյան Լուսինե/
    - «XX-XXI դդ. Էթնոմշակութային գործընթացները. Հայաստանի և Բելառուսի քաղաքների համեմատական ուսումնասիրություն», ՀՀ, ԳՊԿ, 2019-2021 /Ներսիսյան Սոնա, Տանաջյան Լուսինե/
    - «Շախմատը դպրոցում» FIDE, 2020-2023 /Տանաջյան Քրիստինե, Գևորգյան Նունե/
- ֆակուլտետի կրթական ծրագրերի պատասխանատու ամբիոնների ՊԴԱ կազմը իրենց հետազոտությունների արդյունքները տպագրել են օտարերկրյա պարբերականներում, քննարկել են միջազգային գիտաժողովների, կլոր սեղանների շրջանակներում, առցանց հարթակներում : Մասնավորապես՝
    1. ПРОБЛЕМЫ РАЗВИТИЯ ЛИЧНОСТИ В УСЛОВИЯХ ГЛОБАЛИЗАЦИИ: ПСИХОЛОГО-ПЕДАГОГИЧЕСКИЕ АСПЕКТЫ» II Международная научно-практическая конференция, Ереван, Российско-Армянский университет
    2. Международная научно-практическая конференция «Историческая память и современные политические процессы» 28 октября 2020 года, РЭУ имени Г.В. Плеханова, Ереван
    3. ONLINE LOCAL FORUM ON SOCIAL ENTREPRENEURSHIP IN FRAME OF“SOCIAL ENTREPRENEURSHIP: TOOLS ANDTRAINERS”ERASMUS PLUS PROJECT , 5th of september, 2020, online platform https://www.facebook.com/events/644111639571741/?acontext=%7B"source"%3A5%2C"action_history"%3A[%7B"surface"%3A"page"%2C"mechanism"%3A"main_list"%2C"
    4. XIV Ковалевские чтения 14-16 ноября , 2020
    5. IV ISA Forum of Sociology (October 15, 2020- February 23-27, 2021), online platform /https://www.isa-sociology.org/en/conferences/forum/porto-alegre-2021
    6. Международный день социального бизнеса,28 июня 2020, https://www.facebook.com/events/641276373121966/?acontext=%7B"action_history"%3A[%7B"surface"%3A"page"%2C"mechanism"%3A"page_admin_bar"%2C"extra_data"%3A"%7B%5C"page_id%5C"%3A514892668988915%7D"%7D%2C%7B"surface"%3A"events_admin_tool"%2C"mechanism"%3A"events_admin_tool"%2C"extra_data"%3A"[]"%7D]%2C"has_source"%3Atrue%7D
    7. Международный марафон "Бизнес с душой", окт.30-24ноя.,2020 / https://www.instagram.com/p/CGUkvW-Bcle/?igshid=1q2piool0y3sp&fbclid=IwAR2WVHNFd0pfyMuE5_8oekHFmTj9dT-_GIKcSs8QSHMrkANqZROeST98QuU

8. 7" International Conference on Community Development in the ASEAN University of Muhammadiyah Malang (UMM), Indonesia, on July 18, 2020, online platform, www.atlantis-press.com, contact@atlantis-press.com
9. Российский научный форум «Экология и общество: баланс интересов»,г.Вологда 16-20 ноября 2020 года./ http://eco2020.volnc.ru

/Տես՝ նաև սույն հաշվետվության VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ բաժնում/:

- Ֆակուլտետի ՊԴԱ մի շարք ներկայացուցիչներ մասնակցել են անկավարժական համալսարանների եվրասիական ասոցիացիայի և Մոսկվայի պետական մանկավարժական համալսարանի կողմից միջազգային նախագծի շրջանակներում կազմակերպվող ,,Մեդիագրագիտությունը թվայնացված ժամանակաշրջանում՚՚ խորագրով միջոցառումների շարքին, մասնավորապես՝
    - Վեբինար 1. Մեդիագրագիտությունը բարձրագույն մանկավարժական կրթության մեջ.ինտեգրացիայի խնդիրները, 22.10.2020 թ.
    - Վեբինար 2. Մեդիագրագիտությունը մանկավարժների որակավորման բարձրացման համակարգում , 29.10.2020թ.
    - Վեբինար 3. Մեդիագրագիտությունը ոչ առևտրային հատվածի համակարգում, համագործակցության տարածք, 05.11.2020 թ.
    - Վեբինար 4. Մեդիագրագիտությունը ընդհանուր կրթության համակարգում՝ մանկավարժական պրակտիկայի փորձ, 12.11.2020
    - „ Մեդիագրագիտությունը ԱՊՀ երկրներում՝ ինտեգրացիան և զարգացումը՚՚ գիտագործնական գիտաժողով, 26.11.2020
- Միջազգային համագործակցության բաժին է ներկայացվել ֆակուլտետի կրթական ծրագրերի պատասխանատու ամբիոնների ՊԴԱ այն ներկայացուցիչների անվանացանկը, որոնք պատրաստ են դասավանդել օտար լեզվով /ռուսերեն և անգլերեն/, ինչպես նաև կոնկրետ առարկայացանկը, ժամաքանակը և կրեդիտների ծավալը:
- սույն թվականի փետրվարի 10-ից մինչև մարտի 12-ը կազմակերպվել է Ղազախստանի Լ.Ն.Գումիլյովի անվան եվրասիական ազգային համալսարանի բակալավրիական կրթության <<Սոցիալական աշխատանք>> մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի Զարինա Սերգեյի Ուսենգալիևայի ուսումնական գործընթացը Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի Սոցիալական աշխատանք մասնագիտությամբ: Սկզբնական պայմանավորվածության համաձայն միջբուհական համագործակցության շրջանակներում անվճար հիմունքներով ենթադրում էր ուսումնական գործընթաց 10.02.2020-10.05.2020թթ. ընկած ժամանակահատվածում, որն ընդհատվեց թագավարակի համավարակի շրջանակներում իրականացվող միջոցառումների պատճառով:

Վերլուծել հաշվետու տարում ֆակուլտետի արտաքին կապերին և միջազգայնացմանը նպաստող աշխատանքները, ֆակուլտետի տարեկան գործողությունների ծրագիրը, դրանց արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումները /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Ըստ 2016-2020 թվականների զարգացման ռազմավարական ծրագրի Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի 2020 թվականի գործողությունների պլանով ընդհանուր առմամբ նախատեսված էին հետևյալ քայլերը.

1. Ընդլայնել միջազգային համագործակցության ուղղությունները Ֆակուլտետի զարգացման ծրագրին համահունչ:
2. Աջակցել ֆակուլտետի բոլոր ամբիոններին՝ ներգրավվելու միջազգային համագործակցության ծրագրերում:
3. Խթանել Ֆակուլտետի ուսանողների և գիտամանկավարժական կազմի մասնակցությունը միջազգային փոխանակման ծրագրերին, բարձրացնել ներգնա և արտագնա շարժունության ծրագրերում նրանց մասնակցությունը:
4. Նպաստել օտարերկրյա հրավիրված դասախոսների ֆակուլտետ պարբերական այցելություններին և ընդլայնել ամբիոնների կրթական ծրագրերում նրանց մասնակցության շրջանակները:
5. Խթանել ֆակուլտետի հետազոտական աշխատանքների միջազգայնացման գործընթացները, ապահովել ֆակուլտետի ներգրավումը Եվրոպական հետազոտական տարածքին:
6. Շարունակել խթանել ֆակուլտետի գիտական համագործակցությունը արտասահմանյան առաջատար համալսարանների և գիտական կենտրոնների հետ, համատեղ նախագծերի նախաձեռնումը ու իրականացումը երկկողմ պայմանագրերի, կոնսորցիումների և միջազգային ցանցերի շրջանակներում:

7. Իրականացնել հայաստան երկրներից սփյուռքահայ դիմորդների ներհոսքը խթանող և ակտիվացնող աշխատանքներ:

Ռազմավարական ծրագրի 2020 թվականի գործողությունների պլանով նախատեսված քայլերի ուղղությամբ իրականացված աշխատանքները ներկայացրել ենք նախորդ ենթակետում: Դրանց արդյունավետության ապահովման ուղղությամբ իրականացվող աշխատանքները քննարկվել են ֆակուլտետի խորհրդի, ամբիոնների նիստերում: Այս ուղղությամբ ֆակուլտետը դետևս անելիքներ ունի:

## X. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

**Ներկայացնել և վերլուծել ֆակուլտետի որակի ապահովման ներքին համակարգի արդյունավետությունը:**

Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետում և ամբիոններում որակի ապահովման պատասխանատուների կողմից 2019-2020 ուսումնական տարեսկզբին կազմվել է միջոցառումների պլան, ըստ որի կազմակերպվել են հետագա աշխատանքները:

Որակի ապահովման գործընթացների կառավարման շրջանակներում կազմակերպվել են ֆակուլտետային և ամբիոնային առցանց քննարկումներ ֆակուլտետի ենթակառուցվածքային ստորաբաժանումների /ամբիոնների/ գործունեության արդյունավետության բարձրացման ուղիների, Համալսարանի 2016-2020թթ զարգացման ռազմավարական ծրագրի 2020թ. ֆակուլտետի ԳՊ-ի քայլերի իրականացման ընթացքի վերաբերյալ համավարակի, հատկապես համավարակի և առցանց ուսումնական գործընթացի կազմակերպման պայմաններում /հիմք՝ ամբիոնների նիստերի արձանագրությունները, ռեկտորատի զեկույցները/:

Հաշվետու ժամանակահատվածում ֆակուլտետում և կրթական ծրագրերի պատասխանատու ամբիոններում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

Ուսումնական գործընթացի որակի ապահովման մոնիտորինգ, վերլուծություն և ներկայացում ֆակուլտետի խորհրդի և ռեկտորատի նիստերին:

Հոգեբանության ամբիոնում՝

1. Որակի ապահովման գործընթացների կառավարման ընթացիկ հարցերի քննարկում /հիմքերը՝ 2020-2021 թթ. Հոգեբանության ամբիոնի սեպտեմբերի 1-ի, 1-ին նիստի արձանագրություն/,

2. Բարելավվել են բակալավրի և մագիստրատուրայի ՄԿԾ-երը, վերանայվել են առարկայական նկարագրերը /հիմքերը՝ 2020-2021 թթ. Հոգեբանության ամբիոնի սեպտեմբերի 1-ի, 1-ին հանդիպման արձանագրություն/,

3. Ամբիոնների ուսումնական գործունեության վերլուծություն, մասնավորապես «Google Classroom» հարթակում առցանց դասերի առավել նպատակահարմար իրականացման առաջարկներ և քննարկումներ,

5. Ամբիոնի հետազոտական գործունեության վերլուծություն, մասնավորապես՝ կուրսային, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների, չափանիշների, ժամկետների քննարկում և վերանայում /հիմքերը՝ 2020-2021 թթ. որակի ապահովման գործընթացների Հոգեբանության ամբիոնի սեպտեմբերի 14-ի, 2-րդ հանդիպման արձանագրություն/,

6. Քննարկվել են ընտրովի դասընթացների բովանդակային նյութերի բարելավման և փոփոխությունների իրականացման անհրաժեշտությունը /հիմքերը՝ 2020-2021 թթ. Հոգեբանության ամբիոնի սեպտեմբերի 1-ի, 1-ին նիստի արձանագրություն/:

Կիրառական հոգեբանության ամբիոնում՝

1. Իրականացվել են ՄԿԾ-ների բարելավման քայլերի իրականացմանն ուղղված առաջարկների քննարկում:
2. Առաջարկվել են ՄԿԾ խմբերը սահմանված ժամկետներում իրականացնեն ՄԿԾ հենանշում և արդյունքների ներկայացում:
3. Իրականցվել են SWOT վերլուծության:

| |
|---|
| 4. Ներքին և արտաքին լավագույն փորձի /բենչմարքինգի իրականացում (ուս. տարվա ընթացքում):<br><br>Սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոնում՝<br><br>1. Անհրաժեշտ փաստաթղթերի պլանավորում<br>2. Որակի ապահովման գործընթացների կառավարում<br>3. Մասնագիտության կրթական ծրագրի (ՄԿԾ) զարգացում և իրականացում<br>4. Ուսումնառության և ուսանողական կյանքի կազմակերպում<br>5. Պրոֆեսորադասախոսական կազմի զարգացում և կատարելագործում<br>6. Որակի ապահովման գործընթացների մշտադիտարկում |
| Ներկայացնել որակի ներքին ապահովման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության աստիճանը: |
| Որպես շահակից կողմ ֆակուլտետի ներքին ապահովման հանձնախմբերում, ինչպես նաև ֆակուլտետային քննարկումներում ներգրավվել են դասախոսներ, ուսանողական համայնքի ներկայացուցիչներ: Գործընթացն առավել արդյունավետ կազմակերպվելու համար անց են կացվել տեղեկատվական և ուսուցողական առցանց հանդիպումներ:<br>Ֆակուլտետի ՊԴԱ կազմում ներգրավված են նաև գործատուներ, ոլորտի լավագույն պրակտիկ մասնագետներ, ինչը միտված է ֆակուլտետ-գործատու համագործակցության ընդլայնմանը, ուսանողների ուսումնական գործընթացի, մասնավորապես պրակտիկաների կազմակերպման, տեսականի և գործնականի համադրման, ուսանողների հետագա աշխատանքային գործունեության և մասնագիտական կայացման գործընթացների արդյունավետության ապահովմանը |